ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ /1-ին հանրային լսում/

07.10.2025 Սիսիան համայնք, Անգեղակոթ բնակավայր

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-150-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ սահմանված կարգով 2025թ հոկտեմբերի 3-ին, ժամը 12:00-ին ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի՝ Անգեղակոթ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «Գրիգոր-Գուրգեն» արտադրական կոոպերատիվի կողմից կառուցվող ՓՀԵԿ-ի /1-ին /հանրային լսումը: Հանրային քննարկումներին մասնակցում էին ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետարանի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Ա.Խաչատրյանը, Սիսիանի համայնքապետարանի քաղաքաշինության բաժնի առաջատար մասնագետ, Հ.Քարամյանը, «Գրիգոր-Գուրգեն» արտադրական կոոպերատիվի տնօրեն՝ Գ. Պողոսյանը, «Գրիգոր-Գուրգեն» արտադրական կոոպերատիվի կողմից հրավիրված անկախ փորձագետ՝ Արամ Գալոյանը և նախագծային կազմակերպության ներկայացուցիչ՝ Դավիթ Պապիկյանը, Անգեղակոթի բնակավայրի վարչական ղեկավար Ա.Մարկոսյանը, համայնքի և բնակավայրի բնակիչներ:

Բացման խոսքով հանդես եկավ ՝ ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետարանի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Արմեն Խաչատրյանը նշեց, որ համայնքում իրականացնում են 1-ին հանրային քննարկումը: Համայնքը պատշաճ ծանուցված է, ամեն ինչ նորմայի սահմաններում է:

Ելույթ ունեցան՝

«Գրիգոր-Գուրգեն» արտադրական կոոպերատիվի կողմից հրավիրված նախագծային կազմակերպության ներկայաղուցիչ Դ. Պապիկյանը՝ ներկայացրեց նախատեսվող ՓՀԵԿ-ի նախնական նախագիծը: ՓՀԵԿ-ը ունենալու է հետևյալ կառուցվածքները՝ կապտաժային ջրընդունիչ, ճնշումային խողովակաշար և ՓՀԵԿ-ի շենք: Նախատեսվում է ջուրը վերցնել 80 լիտր վարկյան «Փարախլու» կոչվող աղբյուրից և ջուրը ՓՀԵԿ-ի շենքից հեռացման ջրանցքով դուրս է գալու ջրամբար: Նշեց նաև որ Գրիգոր-Գուրգեն» արտադրական կոոպերատիվը ունի ջրօկտագործման թույլտվություն և հանրային ծառայության կողմից տրված լիցենզիա:

Նախատեսվող աշխատանքների իրականացման ընթացքում Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության նկարագրությունը ներկայացրեց «Գրիգոր-Գուրգեն» արտադրական կոոպերատիվի կողմից հրավիրված անկախ փորձագետ՝ Արամ Գալոյանը: Ներկայացրեց նաև ՀՀ օրենսդրությունը, <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի պահանջները:

Ելույթ ունեցան համայնքի բնակիչներ, ովքեր միաձայն ողջունեցին նախատեսվող գործունեությանը:

Հնչեցին հարցեր կապված սոցիալական ծրագրերի, աշխատատեղերի վերաբերյալ, ընկերությունը հավաստեց, որ համայնքի հետ կքննարկվեն և կնախատեսվեն սոցիալական ծրագրեր, ինչպես նաև աշխատողները հնարավորինս կլինեն Անգեղակոթ բնակավայրից:

Ամփոփելով հանրային քննարկման արդյունքները՝ մասնակիցները որոշեցին հավանություն տալ «Գրիգոր-Գուրգեն» արտադրական կոոպերատիվի կողմից ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Անգեղակոթ բնակավայրի վարչական տարածքում նախատեսվող ՓՀԵԿ-ի կառուցման աշխատանքներին:

Կից ներկայացվում է մասնակիցների ցանկը՝ 1 թերթ:

Հանրային լսումների ամբողջ ընթացքը տեսաձայնագրվել է, որից հետո մասնակիցները ստորագրել են ի նշան հանրային լսմանը իրենց մասնակցության:

Քննարկումների պատասխանատու և վարող՝

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետարանի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Արմեն Խաչատրյան

Ձեռնարկող՝

«Գրիգոր-Գուրգեն» արտադրական կոոպերատիվի տնօրեն՝ Գրիգոր Պողոսյան

Արձանագրող՝ Սիսիանի համայնքապետարանի քաղաքաշինության բաժնի առաջատար մասնագետ՝

Հայկ Քարամյան